

Luys Lnyu®



ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ
ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ
2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ՄԱՐՏ ԱՄԻՍՆԵՐԻՆ.
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆԿՄԱՆ ՍԿԻԶԲԸ




ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ	1
1.1. Արդյունաբերություն	2
1.2. Շինարարություն	3
1.3. Ծառայություններ	4
1.4. Առևտուր	4
2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ	5
3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ	6
4. ՓՈԽԱՐԺԵՔ	7
5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ	9
5.1. Բյուջեի եկամուտներ	9
5.2. Բյուջեի ծախսեր	10
5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը	11
5.4. Պետական պարտք	12
6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ	12
6.1. Գնաճ	12
6.2. Ավանդներ և վարկեր	13
7. ԱՄՓՈՓՈՒՄ	15

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային, %



Կորոնավիրուսի տարածման կանխարգելման նպատակով ինչպես ՀՀ-ում, այնպես էլ գործընկեր երկրներում կիրառվող տնտեսական գործունեության սահմանափակումները իրենց արտացոլումն են գտել մարտ ամսվա տնտեսական ցուցանիշներում:

2020թ. հունվար-մարտ ամիսներին տնտեսական ակտիվության ցուցանիշը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ կտրուկ նվազել է՝ կազմելով 4.0%, ինչը հունվար-փետրվար ամիսների ցուցանիշից փոքր է մոտ 5.2 տոկոսային կետով:


Քանի որ մարտ ամսվա տնտեսական իրավիճակը կտրուկ փոխվել է փետրվարի նկատմամբ, ապա բավական կարևոր է ուսումնասիրել 12-ամսյա աճերը, այսինքն՝ մարտ ամսվա աճը նախորդ տարվա մարտի նկատմամբ: Եվ այսպես, 2020թ. մարտ ամսին ՏԱՑ-ը նախորդ տարվա մարտի նկատմամբ կազմել է -4.9 տոկոս, ինչն արձանագրում է տնտեսական անկման սկիզբը:

Հարկ է նշել, որ ՀՀ վիճակագրական կոմիտեն հունվար-մարտ ամիսների տնտեսական ցուցանիշները հրապարակելիս զգալի չափով ճշգրտել է նախորդ ամիսների աճերը: Այսպես, հունվար ամսվա ՏԱՑ-ը 8.8%-ից դարձել է 9.3%, իսկ հունվար-փետրվար ամիսներինը՝ 8.7%-ից 9.2%: Ճշգրտումները վերաբերում են նաև ինչպես տնտեսության ճյուղերի աճերին, այնպես էլ արտահանման և ներմուծման ցուցանիշներին:

Տնտեսական ակտիվության ցուցանիշին հիմնականում նպաստել են ծառայությունների և արդյունաբերության աճերը՝ համապատասխանաբար 2.2 և 2.4 տոկոսային կետով: ՏԱՑ-ին 0.8 տոկոսային կետով բացասական նպաստում է ունեցել շինարարությունը:


Գյուղատնտեսության ոլորտի 2020թ. ցուցանիշները հրապարակվել են առաջին անգամ: Ըստ դրանց՝ ընթացիկ տարվա հունվար-մարտ ամիսներին գյուղատնտեսությունն աճել է 4.5 տոկոսով: Սակայն, ինչպես նախկինում, չի հրապարակվել ամսական աճերը, հետևաբար հնարավոր չէ գնահատել, թե ինչպես են մարտ ամսվա զարգացումները ազդել գյուղատնտեսության վրա:

Գծապատկեր 2. Տնտեսական ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները, 2020թ., տոկոսային կետ



1.1. Արդյունաբերություն

Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը, %




Արդյունաբերության ոլորտի բարձր աճը նույնպես կտրուկ նվազել է: 2020թ. մարտին արդյունաբերության թողարկման ծավալը նախորդ տարվա

մարտի նկատմամբ նվազել է 1.9%-ով, հետևաբար հունվար-մարտ ամիսների աճը կտրուկ նվազել է՝ 15.3%-ից դառնալով 8.7%:

Ինչպես նախկինում նշել էինք, արդյունաբերության տարեսկզբի աճը պայմանավորված է հանքարդյունաբերության ոլորտի վերականգնմամբ, քանի որ Թեղուտի հանքավայրը արդեն շահագործվում է: Հունվար-փետրվար ամիսների տվյալները¹ նույնպես վկայում են այդ մասին: Այսպես, հունվար-փետրվար ամիսներին արդյունաբերության աճը կազմել է 15.3%, որի 6.3 տոկոսային կետը պայմանավորված է հանքարդյունաբերության 36.5% աճով, իսկ 6.1 տոկոսային կետը՝ մշակող արդյունաբերության 9.5% աճով: «Էլեկտրաէներգիայի և գազի մատակարարում» ենթաճյուղը աճել է 18.6%՝ ունենալով 3.1 տոկոսային կետ դրական նպաստում, իսկ «ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում» ենթաճյուղը նվազել է 16.9 տոկոսով՝ արդյունաբերության ընդհանուր աճին ունենալով 0.3 տոկոսային կետ բացասական նպաստում:

1.2. Շինարարություն

Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, %




Արտակարգ իրավիճակից ամենաշատ տուժած ճյուղը շինարարությունն է: Ընթացիկ տարվա մարտին շինարարության ծավալը նախորդ տարվա մարտի նկատմամբ նվազել է 26.2%-ով: Արդյունքում, շինարարության՝ հունվար-փետրվարի առանց այդ էլ նվազող տեմպ ունեցող աճը հունվար-մարտին վերածվել է անկման՝ կազմելով -9.4%:

¹ Հունվար-մարտ ամիսների տվյալները դեռևս չեն հրապարակվել:

1.3. Ծառայություններ


Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, %



Ինչպես և սպասելի էր, ծառայությունների կուտակային աճի տեմպը նույնպես դանդաղել է, իսկ ամսական աճը բացասական է: Նախորդ տարվա նկատմամբ ծառայությունների ոլորտի անկումը կազմել է 4.8%, իսկ հունվար-մարտ ամիսների աճը դանդաղել է՝ 11.2%-ից հասնելով 5.5%-ի: Քանի որ մարտ ամսին ոլորտի պատկերը կտրուկ փոխվել է, հունվար-փետրվար ամիսների ծառայությունների կառուցվածքը վերլուծելը արդյունավետ չի լինի: Հետևաբար, պետք է սպասել մարտ ամսվա կառուցվածքի հրապարակմանը, որպեսզի պարզ լինի, թե ծառայությունների որ ենթաճյուղերն են առավել շատ տուժել կիրառվող սահմանափակումներից:

1.4. Առևտուր

Գծապատկեր 6. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, %




Առևտրի ծավալները մարտին նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ նվազել են 9.9%-ով: Առևտրի ծավալների աճի տեմպի դանդաղումը սկսել էր դեռևս

փետրվար ամսից, իսկ մարտին դանդաղումն ավելի է խորացել: Մարտ ամսվա անկման հետևանքով հունվար-մարտ ամիսների աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ կազմել է ընդամենը 0.2%:


2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ

Գծապատկեր 7. Արտահանման կուտակային աճ, %



Մարտ ամսին արտահանման ծավալները զգալի նվազել են: Կորոնավիրուսի տարածման հետևանքով սահմանափակումներ են մտցվել ոչ միայն Հայաստանում, այլև գործընկեր երկրներում: Հետևաբար, արտահանման ծավալների վրա տեղի է ունեցել կրկնակի շոկի ազդեցություն: Դրա հետևանքով արտահանման ծավալները մարտին նախորդ տարվա մարտի նկատմամբ նվազել են 17.4%-ով: Կուտակային աճի ցուցանիշը փետրվարի 11.1%-ից նվազել է մինչև 0.2%:

Գծապատկեր 8. Ներմուծման կուտակային աճ, %




Ներմուծման ծավալները նույնպես նվազում են: Ի տարբերություն արտահանման՝ ներմուծման վրա ազդում են հիմնականում ներքին սահմանափակումները, քանի որ նվազող սպառողական ծախսերի պայմաններում նվազում է նաև ներմուծումը: Մարտ ամսվա ներմուծման ծավալները նախորդ տարվա մարտի նկատմամբ նվազել են 15.3%-ով, իսկ կուտակային՝ հունվար-մարտ ամիսների անկումը կազմել է 6.2%:

3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ




2020թ. հունվար-մարտ ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 9.2 տոկոսով: Ընդ որում՝ պետական հատվածում աշխատավարձն աճել է 10.5 տոկոսով, իսկ մասնավոր հատվածում՝ 7.7 տոկոսով: Պետական հատվածի աշխատավարձի աճը բացատրվում է մի շարք պետական աշխատողների (զինծառայողների, ուսուցիչների, բուժաշխատողների և այլոց) աշխատավարձերի բարձրացմամբ: Մասնավոր հատվածի աշխատավարձի աճը հիմնականում պայմանավորված է նվազագույն աշխատավարձի աճով:

Գծապատկեր 9. Միջին ամսական անվանական աշխատավարձի աճը, 2020թ., հունվար-մարտ, %



4. ՓՈԽԱՐԺԵՔ

**Գծապատկեր 10. Անվանական փոխարժեքի միտումները, կուտակային աճը, %
(աճը նշանակում է ՀՀ դրամի արժևորում)**




2020 թվականի հունվար-մարտ ամիսներին ՀՀ դրամի միջին փոխարժեքն ԱՄՆ դոլարի նկատմամբ արժևորվել է 1.0 տոկոսով՝ նախորդ տարվա նույն ամիսների համեմատությամբ: Նույն ժամանակահատվածում եվրոյի նկատմամբ ՀՀ դրամը արժևորվել է 4.1 տոկոսով, իսկ ՌԴ ռուբլու նկատմամբ՝ 1.7 տոկոսով:

Տարածաշրջանի գրեթե բոլոր երկրներում ազգային արժույթները արժեզրկվում են կորոնավիրուսի հետևանքով ստեղծված իրավիճակի պատճառով, մինչդեռ Հայաստանում դրամը արժևորվել է: Դրամի վրա բավական մեծ արժեզրկման ճնշումներ եղան մարտի երկրորդ կեսերից սկսած, երբ դրամի միջին օրական փոխարժեքը հասավ մոտ 505 դրամի: Սակայն, Կենտրոնական բանկի ջանքերով, դրամի փոխարժեքը վերադարձվել է հունվար-փետրվար ամիսների միջին արժեքին, որը կազմում է շուրջ 479 դրամ մեկ դոլարի դիմաց (տե՛ս Գծապատկեր 11):


ԿԲ-ի՝ արժութային շուկային միջամտության մասին է խոսում նաև արտաքին պահուստների ցուցանիշը, որը 2020թ. մարտի վերջի դրությամբ կազմել է 2,582.0 մլն ԱՄՆ դոլար՝ փետրվարի նկատմամբ նվազելով 76.9 մլն դոլարով, իսկ 2019թ. դեկտեմբերի նկատմամբ՝ 267.7 մլն դոլարով (տե՛ս Գծապատկեր 12):

Սակայն, նման պայմաններում բավական վտանգավոր է փոխարժեքի կայունացման քաղաքականության իրականացումը, քանի որ մի կողմից՝ փոխարժեքի գերարժևորումը (արժեզրկման կանխումը) բացասաբար է ազդում առանց այդ էլ անկում ապրող արտահանման վրա, մյուս կողմից՝ ԿԲ-ն պետք է խնայի արտաքին պահուստները ճգնաժամի հնարավոր խորացմանը դիմակայելու համար:

Գծապատկեր 11. ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի միջին օրական անվանական փոխարժեքը



Գծապատկեր 12. ՀՀ ԿԲ ՀՀ միջազգային պահուստները, մլն ԱՄՆ դոլար²



5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ

5.1. Բյուջեի եկամուտներ

Արտակարգ իրավիճակը կարծես թե չի ազդել հարկային եկամուտների վրա: Հիմնական պատճառն այն է, որ մարտին վճարվել են փետրվարի գործունեության համար գոյացած հարկերը: Հունվար-մարտ ամիսներին պետական բյուջեի եկամուտներն աճել են մոտ 15.7%-ով: Ընդ որում, հարկային եկամուտները և պետական տուրքերն աճել են մոտ 16.5%-ով: Աճին հիմնականում նպաստել են շահութահարկի և եկամտային հարկի աճերը՝ համապատասխանաբար 6.1 և 4.6 տոկոսային կետով:

Հունվար-մարտ ամիսներին փաստացի հարկային եկամուտները և պետական տուրքերը կազմել են 349.0 մլրդ դրամ, սակայն նախատեսված էր հավաքագրել 340.1 մլրդ դրամ: Հետևաբար, առաջին եռամսյակում հարկային եկամուտները գերակատարվել են մոտ 8.9 մլրդ դրամով:


² Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ: 2019թ. դեկտեմբերի ցուցանիշում ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները: Իսկ 2020թ. մարտի ցուցանիշը նախնական է, և ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները ներառված չեն:

Աղյուսակ 1. Հարկային եկամուտները և պետական տուրքերն ըստ եկամտատեսակների, 2020թ. հունվար-մարտ

	Ծավալը, մլրդ դրամ	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ
Ընդամենը հարկային եկամուտներ և պետական տուրք	349.0	16.5	16.5
ԱԱՀ	119.3	8.3	3.1
Շահութահարկ	37.9	94.3	6.1
Եկամտային հարկ	109.4	14.3	4.6
Ակցիզային հարկ	27.2	16.3	1.3
Շրջանառության հարկ	8.9	20.3	0.5
Արտոնագրային հարկ	0.02	-98.2	-0.4
Բնապահպանական հարկ և բնօգտագործման վճար	8.0	13.2	0.3
Մաքսատուրք	16.9	-10.0	-0.6
Սոցիալական վճար	5.8	22.3	0.4
Այլ հարկային եկամուտներ	5.8	47.8	0.6
Պետական տուրք	9.9	22.7	0.6
Հարկերի անցումային գերավճար	-0.1	-	0.0

5.2. Բյուջեի ծախսեր

Գծապատկեր 13. Պետական բյուջեի ծախսերը և դրա բաղադրիչները, մլրդ դրամ




Պետական բյուջեի ծախսերի աճը շարունակվել է նաև մարտ ամսին: Այսպես, հունվար-մարտ ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ ընդհանուր ծախսերն աճել են 15.0 տոկոսով՝ կազմելով 331.1 մլրդ

դրամ, որից ընթացիկ ծախսերն աճել են 11.4 տոկոսով՝ կազմելով 315.3 մլրդ դրամ, իսկ կապիտալ ծախսերը (ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները) աճել են մոտ 3.3 անգամ՝ կազմելով 15.7 մլրդ դրամ:

Սակայն, պետական բյուջեով նախատեսված էր առաջին եռամսյակում կատարել 398.4 մլրդ դրամ ծախս, որից 356.0 մլրդ դրամը՝ ընթացիկ, իսկ 42.4 մլրդ դրամը՝ կապիտալ ծախսեր: Այսինքն՝ ըստ փաստացի տվյալների, ընդհանուր ծախսերը թերակատարվել են 16.9%-ով, ընթացիկ ծախսերը՝ 11.4%-ով, իսկ կապիտալ ծախսերը՝ 63.0%-ով:

5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը


Գծապատկեր 14. Պետական բյուջեի հավելուրդը (պակասուրդը -), ժամանակահատվածի վերջի դրությամբ, մլրդ դրամ



2020թ. հունվար-մարտ ամիսներին պետական բյուջեն չարունակում է մնալ հավելուրդային: Պետական բյուջեի եկամուտները զգալի չափով գերազանցել են ծախսերը, ինչի արդյունքում ձևավորվել է պետական բյուջեի հավելուրդ՝ մոտ 39.0 մլրդ դրամի չափով, որը նախորդ տարվա հունվար-մարտ ամիսների հավելուրդից մեծ է 22.3 տոկոսով: Նման իրավիճակը պայմանավորված է պետական բյուջեի ծախսերի թերակատարմամբ:

5.4. Պետական պարտք

Գծապատկեր 15. ՀՀ կառավարության պարտքի (ԱՄՆ դոլարով) 12-ամսյա աճը, %




2020թ. մարտի վերջի դրությամբ ՀՀ կառավարության պարտքը կազմել է 6,790.3 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճելով 6.3%-ով: Նախորդ ամսվա նկատմամբ կառավարության պարտքը նվազել է մոտ 78.0 մլն ԱՄՆ դոլարով (1.1%-ով): Ընդ որում, ներքին պարտքը նվազել է 62.0 մլն դոլարով, իսկ արտաքին պարտքը՝ 16.0 մլն դոլարով:

6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

6.1. Գնաճ

Գծապատկեր 16. 12-ամսյա գնաճ, %




Գնանկումային միջավայրը շարունակվել է նաև մարտ ամսին: 2019թ. ընթացքում ՀՀ ԿԲ-ն երկու անգամ նվազեցրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ հասցնելով այն 5.5%-ի: Սակայն, ԿԲ-ի խթանող քաղաքականությունը բավարար չի եղել գնաճը թիրախին մոտեցնելու համար:

2020-ին ցածր գնաճային միջավայրը շարունակվել է, իսկ մարտին գրանցվել է 0.1 տոկոս գնանկում: Այս իրավիճակում կենտրոնական բանկը շարունակել է դրամավարկային քաղաքականության հետագա մեղմումը՝ ընթացիկ տարվա փետրվարին նվազեցնելով վերաֆինանսավորման տոկոսադրույքը 0.25 տոկոսային կետով: Ավելին, արձագանքելով ինչպես ցածր գնաճին, այնպես էլ արդեն իսկ սկսվող տնտեսական անկմանը, ապրիլի 28-ին ԿԲ-ն կրկին 0.25 տոկոսային կետով նվազեցրել է տոկոսադրույքը՝ սահմանելով այն 5.0 տոկոս:


6.2. Ավանդներ և վարկեր

Գծապատկեր 17. Ավանդների 12-ամսյա աճը, %




2020թ. հունվար-մարտին առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդների ծավալների աճը 2019թ. հունվար-մարտի նկատմամբ կազմել է 18.4 տոկոս: Ավանդների ծավալների աճի տեմպը գերազանցել է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը մոտ 5.7 տոկոսային կետով:

Գծապատկեր 18. Տնտեսության հատվածների նպաստումները ավանդների 12-ամսյա աճին, 2020թ., տոկոսային կետ



2020թ. մարտին ավանդների աճին ամենամեծ նպաստումն են ունեցել ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդները, որոնք 2019թ. մարտի համեմատ աճել են 31.5 տոկոսով և ավանդների աճին նպաստել են 8.0 տոկոսային կետով: Ավանդների աճին նշանակալի նպաստում են ունեցել նաև տնային տնտեսություններից ներգրավված ավանդները՝ 6.7 տոկոսային կետով և այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրավված ավանդները՝ 2.0 տոկոսային կետով:

Գծապատկեր 19. Տնտեսության ճյուղերի նպաստումները վարկերի 12-ամսյա աճին, 2020թ., տոկոսային կետ



ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերը (արտարժույթով և ՀՀ դրամով) 2020թ. հունվար-մարտ ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 20.3 տոկոսով, ինչին հիմնականում նպաստել են սպառողական վարկերը՝ 6.9 տոկոսային կետով (աճը՝ 27.9%): Վարկերի աճին նպաստել են նաև հիպոթեքային վարկերը (աճը՝ 46.1%) և ծառայությունների ոլորտին տրամադրված վարկերը (աճը՝ 17.2%)՝ համապատասխանաբար 4.1 և 3.1 տոկոսային կետով:

7. ԱՄՓՈՓՈՒՄ

1. **Կորոնավիրուսի տարածման կանխարգելման նպատակով ինչպես ՀՀ-ում, այնպես էլ գործընկեր երկրներում կիրառվող տնտեսական գործունեության սահմանափակումները իրենց արտացոլումն են գտել մարտ ամսվա տնտեսական ցուցանիշներում: Տնտեսության բոլոր ճյուղերում մարտ ամսվա աճը նախորդ տարվա մարտի համեմատ եղել է բացասական: Հաշվի առնելով, որ մարտ ամսին արտակարգ իրավիճակ է եղել ընդամենը ամսվա կեսին, իսկ ավելի խիստ սահմանափակումները եղել են ընդամենը 5-6 օր, ապա ապրիլին, երբ ամբողջ ամիս գործել են խիստ սահմանափակումները, տնտեսական անկումը կլինի շատ ավելի խոր:**

2. **Արտաքին առևտրի ցուցանիշների զարգացումները ևս բացասական են: Ինչպես արտահանումը, այնպես էլ ներմուծումը ունեցել են բացասական աճեր:** Սակայն, սահմանափակումների վերացումից հետո ներմուծումը հավանաբար կվերականգնվի սպառողական պահանջարկի հետ միասին, սակայն արտահանման վերականգնումը կարող է լինել խնդրահարույց՝ պայմանավորված գործընկեր երկրներում կիրառվող սահմանափակումների պահպանման հետ (օրինակ, ՌԴ-ում իրավիճակը հավանաբար ավելի ուշ կկայունանա՝ կապված մեծ թվով հիվանդների և վերջիններիս աճի բարձր տեմպի հետ): Այդպիսի իրավիճակում, բնականաբար, կոժվարանա տնտեսական վերականգնումը և մեծ ճնշումներ կլինեն փոխարժեքի վրա: Հետևաբար, պետական քաղաքականությունը (ներառյալ ԿԲ արժույթային քաղաքականությունը) պետք է հաշվի առնի նման զարգացումները՝ պատրաստվելով վատագույն սցենարներին:

3. **Պետական բյուջեի կատարողականի հետ կապված նախորդ տարվա խնդիրները շարունակվում են: Ինչպես ընթացիկ ծախսերը, այնպես էլ կապիտալ ծախսերը թերակատարվել են բյուջեի պլանի համեմատ:** Ստացվում է, որ կառավարությունը նորից գումարները հավաքում է տնտեսությունից, սակայն պատշաճ ծավալով չի ծախսում: Սա բոլոր դեպքերում խնդիրներ է առաջացնում տնտեսությունում, իսկ եթե հաշվի առնենք ներկա ճգնաժամային իրավիճակը, ապա նման քաղաքականությունն առհասարակ անթույլատրելի է, քանի որ տնտեսությունը առավել քան երբևէ ունի ֆինանսական միջոցների կարիք:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան [ակտիվ հղման](#) տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: